ՆԱԻՐԱ ՍԱՖԱՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
Մանկավարժական համալսարանի
հենակետային վարժարանի (ավագ դպրոցի) տնօրեն,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կրթական հաստատության կառավարումը ժամանակակից հասարակության իրականություն է՝ կապված սոցիալական միջավայրի զանազան ոլորտների հետ, որը զարգանում է որոշակի սոցիալական համակարգում:

Հանգուցային բառեր և բառակապակցություններ՝ կառավարում, սոցիալական միջավայր, համակարգ, հմտություններ, գործառույթ, կազմակերպչական վարք:

Կրթական համակարգի մասին ժամանակակից պատկերացումը անհրաժեշտաբար հանգում է այդ համակարգի կառավարման մասին որոշակի պատկերացումների: Կրթության կառավարման գործընթացը ներառվում է հասարակության սոցիալական կառավարման ամբողջական համակարգի մեջ և ուղղված է համակարգի կարգավորմանը, որակական ձեռքբերումների պահպանմանն ու զարգացմանը: Կրթության կառավարման արդի հիմնահարցերը համահունչ են հասարակության զարգացման ներկա առանձնահատկություններին ու միտումներին: Այս ենթատեքստում կարելի է առանձնացնել հիմնահարցերի երկու խումբ՝ ըստ կրթության կառավարման գործընթացի նկարագրական-բացատրական և ձևավորող խնդիրների: Առաջինի խմբի գերակա հարցադրումները միտված են լուսաբանելու կառավարման գոյություն ունեցող ձևերի վերլուծության, կառավարման կանոնակարգմանն ու վարչական գործառույթների կիրառման արդյունավետությանը ուղղված հիմնահարցերը: Ընդհանուր առմամբ, կառավարման նկարագրական-բացատրական խնդիրների ուսումնասիրումը տեսական հիմք է ստեղծում կառավարման օրինաչափությունների ձևակերպմանն ու նպաստում է կառավարման պլանավորման կամ կառավարումը ձևավորող խնդիրների բացահայտմանը:

Վերոնշյալ հիմնահարցերի ներառումը կրթության կառավարման ընդհանուր համատեքստում պատմականորեն պայմանավորված ու սոցիալապես արժևորված գործընթաց է, որն իր զարգացման միտումներով համահունչ է հասարակության սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական ու գաղափարախոսական կենսագործունեությանը: Ուստի, կրթական համակարգը, որը ցանկացած հասարակության բաղկացուցիչ մասն է կազմում, արտացոլում է տվյալ հասարակությանը հատուկ հիմնական պահանջմունքներն ու զարգացման միտումները [11;14;16;18;21]: Այդ իսկ պատճառով հարկ ենք համարում կրթական հաստատության կառավարման մասին հարցը քննել կառավարման ընդհանուր տեսության ենթատեքստում:

Կառավարման ամբողջական տեսության առաջացումը և նրանից ածանցյալ՝ կրթական հաստատության կառավարումը, կապվում է 20-րդ դարի սկզբի սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման հետ: Գիտական կառավարման հիմնադիրն է Ֆրեդերիկ Թեյլորը, ով առանձնացրել է կառավար-

ման եզրույթը որպես գիտական հետազոտության ինքնուրույն ոլորտ [7]: Նա ոչ միայն տվել է կառավարման գիտական հիմանվորումը, այլև՝ այն սկզբունքների ու կանոնների, որոնց հիման վրա այն իրականացվում է: Այսպես, էֆեկտիվ կառավարման նախադրյալներն են սկսել համարվել որոշակի ցուցանիշները, ինչպիսիք են աշխատանքի հավասարաչափ բաշխումը, որոշակի խնդիրների ձևակերպումը, համապատասխան տեխնոլոգիաների մշակումը, աշխատակազմի անհրաժեշտ հմտությունները և խրախուսման ու պատժամիջոցների էֆեկտիվ համակարգի ստեղծումը: Թեյլորի կառավարման տեսության հիմքում դիտարկվում է կազմակերպության այնպիսի մոդել, որը գործում է որպես կառավարվող սահուն համակարգ: «Նախկինում առաջին տեղում կանգնած էր մարդը: Ապագայում առաջին տեղը կզբաղեցնի համակարգը»: Մեծ տեսաբանի այս խոսքերը լավագույնս արտացոլում են կառավարման բուն էությունը [7;8]: Այդ մեխանիստական ուղղության հետևորդներից մեկը դարձավ կառավարման տեսության դասական (ադմինիստրատիվ) դպրոցի տեսաբան Անրի Ֆայոլը [9;15]: Նա առաջին անգամ արտահայտեց ոչ միայն ընթացիկ աշխատանքի կազմակերպության ու ղեկավարման անհրաժեշտության գաղափարը, այլև՝ ապագայում նրա պլանավորման: Ֆայոլը զանազանեց կառավարման գործառույթները կառավարման սկզբունքներից: Հիմնական գործառույթների շարքում նա առանձնացրեց կանխազգացումը, կազմակերպումը, բաշխումը, համակարգումն ու վերահսկումը՝ այն ցուցանիշները, որոնք ուղղված են կառավարման կառուցվածքի կազմակերպմանը: Դրանք իրականացվում են մշակված սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են աշխատանքի բաժանումը, իշխանությունը, կարգապահությունը, տնտեսվարության միասնությունը, ղեկավարման միասնությունը, մասնավոր հետաքրքրությունների ստորադասումը ընդհանուրին, աշխատակազմի պարգևատրումը, կենտրոնացման, հիերարխիայի ու արդարության, աշխատակազմի կայունության, նախաձեռնության ու միասնական ոգու սկզբունքները: Ինչպես տեսնում ենք, կառավարման սկզբունքների դասական մեկնաբանությունն արտահայտում է կազմակերպչական վարքի որոշակի նորմեր:

Ֆայոլի կողմից մշակված գործառույթների այս կոնցեպտուալ մոդելը սկիզբ սրեց բազմաթիվ այլ ժամանակակից դպրոցների ու ուղղությունների: Մասնավորապես, կառավարման պրոցեսների ուղղությունը փոխ է առել Ֆայոլից պլանավորման ու կազմակերպման գործառույթների գաղափարները՝ հետագայում դրանք ավելի զարգացնելով:

Երկրորդ աշխարհամարտից հետո տարածում ստացավ մի մոտեցում, որը հիմնված էր կառավարման գործառույթների բաժանման գաղափարի վրա:

Ֆայոլի գործառութային գաղափարների հետագա զարգացումը ստացավ նոր մեկնաբանություններ: Փոփոխվեց կառավաման գործառույթների և կազմակերպչական կառուցվածքի հին հասկացումը: Այժմ այլ կերպ է ընկալվում «ադմինիստրացիա, ադմինիստրատիվ» եզրույթը: Համաձայն Դ.Մաքֆարլանդի, ադմինիստրացիան որոշում է հիմնարկության գլխավոր նպատակներն ու քաղաքականությունը, իսկ կառավարումն ապահովում է գործառնությունների իրականացումը: Եվ չնայած ադմինիստրացիայի ու կառավարման գործառույթները փոխադարձաբար հատվում են, նրանցով կարող են զբաղվել տարբեր մարդիկ: Միաժամանակ, յուրաքանչյուր մակարդակում նույն անձը կարող է կատարել ադմինիստրատորի և ղեկավարի գործառույթները [5;30]:

Կառավարման տեսության հաջորդ քայլը դարձավ Էլթոն Մեյոյի մարդկային հարաբերությունների դպրոցը:

Այն մարդկային գործոնը դիտարկում էր որպես էֆեկտիվ կառավարման հիմնական տարր [2;3;4;6]: Մեյոն 20-րդ դարի 20-30-ական թթ. անց է կացրել Հոթորնյան գիտափորձը, որն ուղղված էր մենեջմենթի խնդիրների բացահայտմանը: Գիտափորձի արդյունքում Մեյոն եկավ ոչ ֆորմալ կոնտակտների հաստատման առաջնայնության մասին եզրակացությանը աշխատակազմի ու ադմինիստրացիայի արդյունավետ փոխհամագործակցության նպատակով: Այսպես, էֆեկտիվ կառավարման հիմքում դրվեց մարդկային գործոնը , իսկ Մեյոյի դիրքորոշումը ստացավ պատերնալիզմի (լատ. pater՝ հայր), անունը՝ որպես աշխատակիցների պահանջմունքներն ու հետաքրքրություններն արտահայտող հայրական խնամքի արտահայտություն և սոցիալական հավասարության գաղափար:

Կառավարման տեսությունը ենթարկվել է նորարար փոփոխությունների 20-րդ դարի երկրորդ կեսին, Երկրորդ աշխարհամարտից հետո: Կառավարման գաղափարները, որոնք մշակվել էին արդյունաբերական տարբեր ոլորտներում աշպատող տեսաբանների և ինժեներների կողմից,սկսեցին տարածվել այլ գիտական հարթակներ և ձեռք բերեցին միջդիսցիպլինար հատկություն: Կառավարման տեսությունում այդ միտումը արտահայտվեց սոցիալական գործոնի շեշտադրման մեջ:Առաջին պլան մղվեցին աշխատակիցների վարքի սոցիոլոգիական և հոբենանական հետազոտությունները: Նմանատիպ հետազոտություններից նշենք Դ.Մաքգրեգորի աշխատությունները, որոնք ներկայացնում են աշխատակցիվարքի երկու տեսակների քննությունը՝ պասիվ, վերահսկվող և բարոյապես կայուն ու ռացիոնալ տեսակները [1;17;19;22]:

Դ.Մաքգրեգորի հետազոտություններին զուգահեռ ի հայտ եկավ կառավարման տեսության ուսումնասիրման մեկ այլ՝ քանակական մոտեցումը, որը ստացավ կառավարման գիտության դպրոցի անվանումը: Այդ մոտեցման ներկայացուցիչների մեծագույն ներդրումն եղավ քանակական մեթոդիկաների ու համակարգչային վերլուծությունների կիրառումը կառավարման ընթացքում:

Կառավարման տեսության զարգացման վերոնշյալ հակիրճ ակնարկը թույլ է տալիս եզրակացնել «կառավարում» եզրույթի սահմանման երեք տարբեր մոտեցումների փոխգործողության մասին:

Առաջին մոտեցումը սահմանում է կառավարումը որպես հասարակական աշխատանքի որոշակի գործառույթ: «Սովետական հանրագիտական բառարանում» այդ մոտեցումը բնորոշվում է որպես «տարաբնույթ կառուցվածքային համակարգերի տարր, գործառույթ, որն ապահովում է նրանց որոշակի կառուցվածքի ու գործունեության պահպանումը և ծրագրերի ու նպատակների իրագործումը» [26]:

Երկրորդ մոտեցումը միավորում է առաջին մոտեցման գաղափարները կառավարման մասին՝ որպես գործունեության տարբեր տեսակների ամբողջություն, մարդկանց խմբերի վրա նպատակաուղղված ներգործության գաղափարի հետ; Վ.Գ.Աֆանասևը այսպես է բնութագրում կառավարման եզրույթի զարգացման այդ անցումային շրջանը. «Կառավարումը ներգործության ձև է՝ համակարգը որակապես նոր կացության հասցնելու նպատակով, որն իրականացվում է ներգործության անհրաժեշտ ու բավարար միջոցների օգնությամբ» [12;13;20]: Ինչպես տեսնում ենք, «կառավարում» եզրույթը ենթարկվել է նշանակալից էվոլուցիայի՝ կառուցվածքի հիմնարար սահմանումից մինչև անձի վրա այդ կառուցվածքի ներգործության անհրաժեշտության գիտակցումը: Սակայն, «կառավարման» բնորոշումը, որպես ներգործության ձև, ենթադրում է տվյալ համակարգի վրա արտաքին սոցիալական միջավայրի միակողմանի ներգործության ուղղվա-

ծություն: Այսպիսի հայացքը անհրաժեշտաբար ենթադրում է սուբյեկտ – օբյեկտ հարաբերությունների գոյությունը տվյալ համակարգում: Նման կառավարման վառ օրինակ է խորհրդային կրթական համակարգի օրինակը, որը ցուցադրում էր հանրակրթական հաստատության կառավարման մի մեխանիզմ՝ հիմնված կրթական գործընթացի վրա կրթական համակարգի արտաքին, միակողմանի ներգործության լծակների վրա:

Երրորդ գիտական մոտեցումը արտահայտում է երկկողմանի ներգործողության կամ՝ համակարգի տարբեր սուբյեկտների փոխգործողության գաղափարը, որոնք մասնակցում են կրթական գործընթացին և ենթադրում են կառավարման առկայություն [23;24]: Խոսքը գնում է համագործակցության փիլիսոփայության, կրթական հաստատության ռեֆլեքսիվ կառավարման՝որպես կառավարման մարմինների ու տվյալ հաստատության կոլեկտիվի գոյակցության ճկուն համակարգի մասին: Այս պարագայում կառավարումը հիմնվում է կրթական հաստատության պահանջմունքների բավարարման անհրաժեշտության, կառավարման մարմինների ու տվյալ կոլեկտիվի միջև հակասության վերացմանգաղափարների վրա [10;17;28]: Այս դիրքորոշումը ներկայացրել է Ի.Ֆ.Իսաևը. «Կրթական հաստատության կառավարումը իրենից ներկայացնում է մանկավարժական ամբողջ գործընթացի մասնակիցների նպատակաուղղված, գիտակցված փոխգործողություն, որն հիմնված է այդ գործընթացի օբյեկտիվ օրինաչափությունների վրա և ուղղված է օպտիմալ արդյունքին հասնելուն» [25;29]:

Այսպիսով, փոխգործողության ներառումը կառավարման հասկացութային շրջանակի մեջ չի բացառում առաջին երկու մոտեցումների կիրառումը, այլ, ընդհակառակը, իր մեջ ներառելով՝ տեսականորեն հիմնվում է այդ գաղափարների վրա: Ավելին, կարող ենք եզրակացնել, որ կառավարում-փոխգործողություն կոնցեպտի առաջացումը պայմանավորված է պատմականորեն ձևավորված նախորդ կոնցեպտների գոյությամբ [27;30]: Այլ խոսքերով, կառավարման ժամանակակից սահմանման հիմնական բաղկացուցիչները ներառում են նախորդ դրույթների հիմնարար սահմանումները: Դրան օրինակ կարող է ծառայել կառավարման հայտնի ֆայոլյան ձևակերպումը, որն իր կարևորությունն ու նշանակությունը պահպանել է առ այսօր. կառավարման հիմնական գործառույթները, որոնք շարադրվել են մեծ տեսաբանի կողմից, այն է՝ պլանավորման, համակարգման, բաշխման, կազմակերպման ու վերահսկման գործառույթները, շարունակում են համարվել կառավարման տեսության կարևորագույն հիմքերից մեկը: Այդ իսկ պատճառով, վերոնշյալ գործառույթների ներառումը կառավարման համակարգում թույլ է տալիս ձևավորելու կրթության կառավարման նոր մոդելներ, իրականացնել դրանց կիրառումը կրթական կոնկրետ հաստատություններում և զարգացնել հասարակայնորեն պայմանավորված նորամուծություններն ու համամարդկային կարևորություն ներկայացնող արժեքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Douglas McGregor, Comparison of Theory X versus Theory Y,-
2. http://www.britannica.com/EBchecked/topic/371017/Elton-Mayo
3. Mayo E., http://www.envisionsoftware.com/articles/Theory_X.htm
4. Richard C. S. Trahair, Elton Mayo: The Humanist Temper, Transaction Publishers, U.S. 2005, p.392
5. Rinehart J. W., The Tyranny of Work, Canadian Social Problems Series, Academic Press Canada, 1975, p. 44
6. Sarachek, B. (1968). Elton Mayo's Social Psychology and Human Relations. The Academy of Management Journal, 11(2), 189-197.
7. Taylor F. W., The Principles of Scientific Management, New York, USA and London, UK, 1911
8. TaylorF., Early Century Management Consultant,- The Wall Street Journal, June 13, 1997, Retrieved: May 4, 2008
9. WrenDanielA., BedeianArthur G., Breeze John D., The foundations of Henri Fayol's administrative theory, - Management Decision, Vol. 40 Iss: 9, 2002, pp. 906 – 918
10. Амонашвили Ш. А.,Воспитательная и образовательная функции оценки учения школьников М., 1984, 296 с.
11. Архангельский С. И.,Учебный процесс в высшей школе, его закономерные основы и методы. М., 1980
12. Афанасьев В. Г.,Научное управление обществом, М., 1973
13. Афанасьев В.Г., Человек в управлении обществом, М., 1977
14. Бабанский Ю. К.,Методы обучения в современной общеобразовательной школе,М., 1985, 208 с.
15. Бабанский Ю. К., Об актуальных проблемах совершенствования обучения в общеобразовательной школе,- Советская педагогика, 1979, № 3
16. Внутришкольное управление: вопросы теории и практики,- под ред. Т.И. Шамовой, М., 2005
17. Давыдов В. В.,Состояние и проблемы исследования учебной деятельности,- Деятельностный подход в психологии: проблемы и перспективы,- под ред. В.В. Давыдова, Д.А. Леонтьева, М., 1990, с. 3-18
18. Конаржевский Ю. А., Внутришкольный менеджмент, М., 2009
19. Краевский В. В.,Методология педагогического исследования: Учеб. пособие для курсов повышения квалификации науч.-пед. кадров. Самара, 1994, 162 с.
20. Крылова Н. Б.,Социальное управление и формированиекультуры личности. М., 1978, 64 с.
21. Леонтьев В. Н., Образование как феномен культуротворчества,- Социологические исследования, 1995, № 1, с. 133-142
22. Лернер И. Я.,Процесс обучения и его закономерности, М., 1980, 96 с.
23. Менеджмент в управлении школой,- под ред. Т.И. Шамовой, М., 2002
24. Подобед В. И., Региональная структура управления образованием,- Советская педагогика, 1991, № 9, с. 29-35
25. Сластенин В., Исаев И. и др. Педагогика: Учебное пособие,- http://www.gumer.info/bibliotek_Buks/Pedagog/slast/22.php
26. Советский энциклопедический словарь. /Под ред. Прохорова А. М., 4-е издание, 1986.
27. Талызина Н. Ф. Управление процессом усвоения знаний, М., 1975 - 353 с.
28. Третьяков П.И. +Практика управления современной школой, М., 2005
29. Шамова Т. И. Исследовательский подход в управлении школой, М., 1992. - 64 с.
30. Шамова Т.И., Тюлю Г.М., Литвиненко Э.В. Оценка управленческой деятельности руководителей школы, Вологда, 2005.

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ УПРАВЛЕНИЯ ОБРАЗОВАНИЕМ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ

САФАРЯН НАИРА

Директор базовой гимназии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, доцент

В статье представлен краткий обзор формирования и развития понятия «управление». Даны основные характеристики трех исторически сформированных подходов изучения управления. Представлены основные положения и взгляды известных теоретиков относительно различных подходов к изучению управления, в частности, в области образования. Определены актуальные вопросы управления образованием и отмечены основные тенденции развития.

CONTEMPORARY ISSUES OF EDUCATION MANAGEMENT AND DEVELOPMENT TENDENCIES

NAIRA SAFARYAN

Headmaster of the Basic College of ASPU, PhD in Pedagogy, Associate Professor

This article presents a brief overview of formation and development of “management”. The general characteristics of historically formed three ways of management investigation are done. There are presented the basic states and opinions of prominent theorists about several ways of management investigation, especially, in educational sphere. Contemporary issues of education management and the general tendencies of management development are determined.